բիարք և առ իշխանաւորս ազգին 'ի Բիւզանդիոն, յայտ արարեալ զմիաբանութիւն իւր ընդ ազգին Յունաց՝ յաղագս տօնի Զատկին, խնդրեաց 'ի նոցանէ տնօրինել զարժանն։

Ի հասանիլ այսոցիկ գրեանց թագաւորեալ քաղաքն՝ ընթերցեալ ազգային երեւելեաց՝ հաճեցան ընդ միաբանութիւնս երկուց ազգաց. ապա յայնմօրէ բարձին 'ի միջոյ երկուստեք զերկիւղ կասկածանաց և երկրայութեան՝ բանակցէին ընդ միմեանս, և խորհէին սիրով և խաղաղութեամբ վախճան տալ գործոյն։

Յետ բազում բանից՝ խնդրեցին Յոյնք 'ի Յովհաննէս Պատրիարքէն Հայոց զդիր պայմանի վասն հաստատութեան բանից, և յետ տալոյ նորա զայն, խնդրեաց և ինքն 'ի նոցանէ փոխադարձ դիր ըստ այնմ, և նոքա խոստացան փութով տալ բերել զայն 'ի Պատրիարքէն իւրեանց, որ էր յայնժամ 'ի կողմանս Մոլտավիոյ։ Ապա միաբանեալ երկուց ազգաց՝ դրեցին դիր աղաչանաց և մատուցին զայն 'ի Դուռն, յայտ արարեալ զմիաբանութիւնս իւրեանց վասն տօնի Զատկին, սիրով և խաղաղութեամբ կատարել զայն յԵրուսաղէմ։

Իսկ Յոյնք զդիր Յովհաննու Պատրիարքի և զդիրն աղաչանաց առաքեցին 'ի Պուքրէշ առ Խրիստոֆոս Պատրիարքն Երուսաղէմի. և նորա հաւանեալ ընդ միաբանութիւն երկուց ազգաց, գրեաց և ինքն զիր հաւատարմութեան և 'ի հաստատութիւն պայմանին եղելոյ, առ Յովհաննէս Պատրիարք Հայոց 'ի Կոստանդինուպոլիս, որ ունէր օրինակ զայս։

Ամենապատիւ և գերերջանիկ Տ. Տ. Յովհաննէս վարդապետ և Ս. Պատրիարք Հայոց 'ի Կոստանդինուպոլիս։

Սիրով ողջունեմք զՍրբազնութիւն ձեր՝ և գրեմք մշտերմաբար։ Ընկալայ զպատուական նամակն ձեր, և քաջ ծանեայ զհանդամանս պատուական անձին ձերոյ, և ցընծացեալ բերկրեցայ 'ի սիրտս և 'ի հոգի. մաղթեմք՝ զի բարեգութն Աստուած պահեսցէ զձեզ 'ի բարօր կենդանութեան՝ 'ի խաղաղասիրութեան և յամենայն երկնապարգեւ բարութիւնս։ Իսկ բովանդակութիւն նամակին ձերոյ, ոչ զայլ ինչ իրաց բանս արկեալ ճառէր, այլ միմիայն զսրբոյ և մեծի Պասիքէն՝ որ ունի պատահիլ մեզ յայսմ ամի, որ-